

UNDERGROUND ՀԱՆՂԻՊՈՒՄՆԵՐ ԱԿՈՒՄԲՈՒՄ

«Underground հանդիպումները» նոր նախաձեռնություն է «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոնի շրջանակներում: Իր գոյության այս կարճ ժամանակահատվածում փառատոնն արդեն մեծ տարածում ունի: Մեծ է նաեւ փառատոնին մասնակցել ցանկացողների թիվը: Այդ իսկ պատճառով բազմաթիվ հրաշալի ֆիլմեր դուրս են մնացել փառատոնի հիմնական ծրագրերից: Անհրաժեշտություն կար, սակայն, հայ հանդիսատեսին հնարավորություն ընձեռել ճանաչելու այդ ֆիլմերը, ֆիլմեր, որոնք իրենց նոր եւ հետաքրքիր մոտեցմամբ միայն կարող են հարստացնել «Ոսկե Ծիրան» կինոփառատոնը: «Underground հանդիպումները» տեղի կունենան 4 գիշեր շարունակ եւ յուրաքանչյուր երեկոն նվիրված կլինի փառատոնի առանձին ծրագրին: Այս հանդիպումների գրավչությունը, թերեւս, այն է, որ հանդիսատեսը հնարավորություն կունենա շփվել փառատոնի հյուրերի հետ՝ ռեժիսորներ, դերասաններ, քննադատներ, եւ այս ամենը Երեւան քաղաքի ամենասիրված վայրերից մեկում՝ հանրահայտ «Ակումբ»-ում: Այս տարի ընտրվել են ֆիլմեր, որոնք անդրադարձնում են քաղաքական եւ մշակութային սուր թեմաների: Ֆիլմերը լայն աշխարհագրություն ունեն՝ Արգենտինա, Ավստրիա, Լեհաստան, ԱՄՆ, Բրազիլիա, Բելգիա: Առանձին մի երեկո նվիրված է լինելու «Հայկական Համայնապատկերը» ներկայացնող ֆիլմերին: «Underground հանդիպումներին» ներկա կլինեն Միխայել Գլավոգերը, Իսակի Լակուեստան, Ռոն Հոլոուեյը, Պետեր վան Բուերեն, Կրիստոբալ Վինսենտեն, Մարիա Սահակյանը եւ այլոք: Գիշերային հանդիպումները խոստանում են լինել անակնկալներով լեցուն:

Հուլիսի 11

22.00-24.00:

Հանդիպում: Գեղարվեստական Մրցույթ:

Մոդերատոր: Զավեն Բոյաջյան

Միխայել Գլավոգեր, Իսակի Լակուեստա:

24.00-03.00

Ցուցադրվող ֆիլմեր

Քամին

Ֆաբիան Բելինսկի: Արգենտինա:

Խաղաղ կյանք վարող ցինիկ խրտվիլակագործը, ով էպիլեպսիայի նոպաներ է ունենում, տառապում է կատարյալ հանցագործություն կատարելու սևեռուն զաղափարով: Նա համոզված է, որ ոստիկանները չափազանց հիմար են, որ բացահայտեն հանցագործությունը, երբ այն լավ է իրագործված, իսկ կողոպտիչներն էլ չափազանց հիմար են, որ այն լավ իրագործեն. փոխարենը նա դա կարող է անել շնորհիվ իր լուսանկարչական հիշողության և ստրատեգիական հմտությունների: Երբ նրան հրավիրում են որսորդական արշավի, կյանքը նրան հնարավորություն է ընձեռում կատարել այն կատարյալ հանցագործությունը, որին սպասում էր:



Վթարային փորձարկման խրտվիլակներ

Յորգ Կալտ: Ավստրիա



Այս ծիծաղաշարժ և արագընթաց ֆիլմը պատմում է ռունինացի մի գույգի՝ Անայի և Նիկոլայի մասին, որոնք գողացված մեքենաներով արագ փող վաստակելու համար ավտոբուսով Բուխարեստից Վիեննա են մեկնում: Երբ նրանք ժամանում են Վիեննա, մեքենան դեռ պատրաստ չի լինում և նրանց խնդրում են համբերատար սպասել: Անան ուզում է վերադառնալ, մինչդեռ Նիկոլան նախընտրում է արևմուտք ուղևորվել: Քամի որ գումար չունեն,

նրանք ստիպված մնում են Վիեննայում: Ծագած վեճից հետո նրանք բաժանվում են և արդյունքում ծանոթանում տարբեր տեղացիների հետ: Նիկոլան հանդիպում է Դանային՝ երեսնամյա կենսախինդ մի ճանապարհորդական գործակալի, իսկ Անան ծանոթանում է ժանի հետ, ով դեռ տառապում է իր

Ուսանողները ընկերություններում ընդունվելու համար հարկադրվում են ցուցաբերել հարկադրվածությունները՝ Մարթան, սակայն, հաղթահարում է դժվարությունները, քանի որ նրա կարծիքով ձախողումները միայն հիմարներին են ընկճում: Երբ Անան և Նիկոլան կրկին հանդիպում են, նրանց հարաբերությունները նոր իմաստ են ստանում:

Հուլիսի 12

22.00-24.00.

Հանդիպում: Ռեժիսորներ Առանց Սահմանների:

Մոդերատոր: Սուսաննա Հարությունյան:

Դորոթեա և Ռոն Հոլուուեյ, Պետեր վան Բուերեն, Անդրեյ Պլախով:

24.00-03.00

Ցուցադրվող ֆիլմեր

Առգրավողը

Ֆելիկս Ֆալկ: Լեհաստան:

Հաջողակ առգրավող Լուսեկ Բոմը հանկարծակի կորցնում է հավատը իր կյանքի և էության նկատմամբ Ֆելիկս Ֆոլկսի Առգրավողը ֆիլմում: Սա ռեժիսորի առաջին գեղարվեստական ֆիլմն է տասը տարվա ընթացքում: Այն հինգ մրցանակ է շահել, այդ թվում նաև այս տարի Գոլդեն Գլոբը կայացած լեհական կինոփառատոնի «Ոսկե Առյուծ» մրցանակը և ներկայացնելու է Լեհաստանը Օսկարի մրցանակաբաշխությանը՝ օտարալեզու ֆիլմերի անվանակարգում:



Էլլեկտրա

Ռուդոլֆ Մեստազի: Բելգիա:



Էլլեկտրան արագ զարգացող սյուրռեալիստական ժամանակակից հեքիաթ է: Ֆիլմի սյուժեն ծավալվում է մի շարք ողբերգական պատահարներից հետո: Էլլեկտրան հայտնվում է, երբ անդառնալի կորուստներ ապրած մարդիկ ստանում են նրանց օգնություն առաջարկողառեղծվածային հաղորդագրություններ: Խոստումը պարզ է. եթե պատասխանեք, ապա մխիթարություն կգտնեք:

Հուլիսի 13:

22.00-24.00:

Հանդիպում: Հայկական Համայնապատկեր

Մոդերատոր: Արթուր Բախտամյան:

Մարիա Սահակյան, Արիս Մովսիսյան, Եղիշե Գևորգյան, Անահիտ Նազարյան, Նիկա Շեկ:

24.00-03.00

Ցուցադրվող ֆիլմեր

Միկոշ

Սեվադա:

Հեքիաթանման պատմություն տղամարդու մի հին կոշիկի մասին, որը փնտրում է իր գույգին: Հայաստանի յուրատեսակ խորհրդանիշը կամ պատկերն է, որը հին է, բայց՝ հարմարավետ (ճիշտ հին կոշիկի պես), չունի իր գույգը կամ իրեն օգնող մեկը:



Անդրեյ Արսեն Ազատյան, Նարինե Մկրտչյան:



Ֆիլմը նվիրված է Անդրեյ Տարկովսկու հիշատակին: 1965-ին նա այցելել է Հայաստան: Պատահաբար վավերացվել են մեծանուն վարպետի՝ Գեղարդի վանք կատարած այցի մի քանի դրվագներ: Այդ կադրերը՝ իբրև եզակի արժեք, հնարավորություն են տվել նոր նկարահանումներով միացնել անցյալն ու ներկան՝ լրացնելով կինոխցիկի աչքից վրիպածը:

Կանացի երջանկություն կամ տղամարդկանց արժանապատվություն Նիկա Շեկ:

Ֆիլմը պատմում է Հայաստանում ապրող երկու կանանց մասին: Նրանցից մեկը, ով ամուսնության պատճառով ստիպված է եղել թողնել դերասանուհու կարիերան, այժմ ամուսնալուծվել է եւ գտել է ազատություն, երջանկություն եւ նոր ստեղծագործական կյանք: Նա, սակայն, ստիպված է պայքարել հասարակական կարծիքի դեմ, որը նրան որպես այդ հասարակության անդամ չի ընդունում: Երկրորդ հերոսուհին այրի է, ով կարոտում է ամուսնուն եւ հավատում, որ կնոջ երջանկությունը ավանդական հայկական ընտանիքում է, որտեղ ղեկավարում է ամուսինը, իսկ կինը տնային տնտեսուհի է:

Մի սեփականաշնորհման պատմություն Արա Շիրինյան:

Երբ 1991 թ-ին Հայաստանը անկախացավ, երկիրը հայտնվեց էներգետիկ ձգնաժամում: Մի քանի տարի շարունակ ժողովուրդը ստիպված էր դիմանալ անմարդկային պայմանների. չջեռուցվող բնակարաններ, հովարային անջատումներ, հացի հերթեր, կաթվածահար երթեւեկություն... Ինչպե՞ս հաղթահարվեց ձգնաժամը, ի՞նչ գին վճարեց երկիրը, ի՞նչ դաս կարող են առնել մյուս երկրները Հայաստանի անցած ուղուց:

Հուլիսի 14

22.00-24.00:

Հանդիպում: Վավերագրական Ֆիլմերի Մրցույթ:

Մոդերատոր: Վիգեն Գալստյան

Գունար Բերգալ, Քրիստոբալ Վինսենտ, Սերգեյ Լոզնիցա:

24.00-03.00

Ցուցադրվող ֆիլմեր

Հոգեվիճակ

Դանիել Գորդոն:

Հյուսիսային Կորեա, ԱՄՆ:



Դանիել Գորդոնի գայթակղիչ վավերագրական ֆիլմը հետևում է, թե ինչպես են երկու դեռահաս մարզուհիներ Հյուսիսային Կորեայից պատրաստվում մասնակցելու երկրի ամենամյա «Ջանգվածային խաղեր» տոնակատարությանը: Խաղերը, որոնք կազմակերպված են ի պատիվ Կիմ Զոնգ-իլի, լույսի, ծայնի և ներդաշնակ շարժումների ցնցող և փոքր-ինչ ահագիւ տեսարան են ներկայացնում: Սա այն եզակի ֆիլմերից է, որին նկարահանման բացառիկ իրավունք է տրվել բռնապետական Հյուսիսային Կորեայում:

Հնչյունների կալեյդոսկոպ Ռեյչել Մոնտեյրո, Կիկո Գոիֆման: Բրազիլիա:



Ֆիլմը հնչյունների և երաժշտություն միջոցով ներկայացնում է գաղթականների առօրյա կյանքը Սաօ Պաուլոյում: Երաժիշտ Լիվիո Տրակտենբերգը բացահայտում է գաղթականների խոհանոցը, երգերը, հոգևոր և աշխարհիկ ծեսերը: Ֆիլմը հարուստ է երաժշտությամբ, երկխոսություններ չկան: